

Ծանօթանալով Սանը ի մերձուստ վարդապետին ազնիւ հոգւոյն եւ բարձր հանճարին հետ, սիրեց զանիկա. խնդրեց որ հրաժարի Երկրէն հեռանալու խորհուրդէն :

Գրիգոր Դարանաղցի, որ Մովսէս վարդապետի Երեւան դալու պատճառը անոր եւ Պօղոս վարդապետի դէմ եղած ամբաստանութեան մը կը վերագրէ, որուն համար Ամիրզունայ խան զանոնք Երեւան բերել կու տայ, հոն մնալու մասին կը գրէ. «Եւ զՄօսէս վարդապետն խնդրեցին յԵրեւանու տօլլաթաւորքն ի Սանէն՝ չթողուցու զնալ յԱնապատին, այլ կալով առ նոսա՝ օրինակ բարեաց լինելով նոցա, տեսականաւն եւ գործնականաւն մխիթարել զնոսա : Եւ հրամայեաց նմա ամիրայն զխնդիրս ժողովրդոյն կատարել եւ մնալ. եւ եղեւ սկիզբն մեծանալոյն Մօսէսին մեծի տեառն» (էջ 290) :

Ամիրզունայ խան ցոյց տուաւ իրեն Կաթողիկէ Եկեղեցին<sup>7</sup>, ուր կրնար կատարել ժամասացութիւնն եւ պատարագը : Երեք տարի մնաց հոս Մովսէս վարդապետ : «Եւ օր աւուր զայր Սանն եւ տեսանէր զպատարագն եւ զայլ արարողութիւնս ժամակար-

<sup>7</sup> Կաթողիկէ եկեղեցին, որ կանգուն է մինչեւ այսօր, Մելքիսեղեկ կաթողիկոսին աթոռանիստ եկեղեցին էր : Կ'երեւայ թէ այս միջոցին Մելքիսեղ կը բացակայէր Երեւանէն. զիտենք որ անիկա 1620, Յունուար 6ին Ջուզայ կը գտնուէր, ուր կատարեց Ջորջհեաց մեծահանդէս արարողութիւնը ի ներկայութեան Շահին. հմտտ. Viaggi di Pietro della Valle, Torino 1843, p. 86 :